

Սիրելի ժխականներ,

Ամիսի այս տեղեկագրով կը փափաքիմ ձեզի ներկայացնել անցնող տարւոյ գործունէութիւնը: Որպէսզի կրկնութիւն չըլլայ եկեղեցւոյ Կազմակերպութեանց հետ միասին կատարած մեր գործերուն մասին հոս յիշելու եւ որդ կը նկատեմ:

Ա - Հովիւի պարտականութեան առաջին դիժին վրայ կուզայ խորհրդակատարութիւններու մատակարարումը: Առաջին եւ կարեւորը, ամէն կիրակի Ս. Պատարագի մատուցումն ու Աւետարանի քարոզութիւնը: Ծնորհակալութիւն Ս. Սեղանի ստասարկողներուն, Դպրաց դասին, ղեկավարին, եւ Օրկընիստին: Նաեւ նախկին Դպրապետ, Տիար Ե. Սուրբեանի եւ Տիկին Լիլիոն Դասավորեանի:

Անցնող տարւոյ ընթացքին մեր եկեղեցւոյ մէջ կատարուած են,

7 Սկստութիւններ. 1 Դրոշմ. 4 Պսակ եւ 2 Թաղում:

Այս խորհրդակատարութեանց ընթացքին միշտ Պրն. Աշոտ Գրիգորեանի ղեկավարութիւնը ունեցած ենք մեր հետ:

Բ - Ի պաշտօնէ նախադաճած ենք եկեղեցւոյ կազմակերպութիւններու ժողովներուն. բացի մի քանի ժողովներէ, արձակուրդի կամ այլ գործի պատճառաւ:

Գ - Ծուխի անդամներուն, նաեւ անդամ չեղողներուն զանազան առիթներով տրուած այցելութիւններ: Խորհրդակատարութեանց ուրախ, եւ կամ հիւանդութեան ու մահուան տխուր առիթներով: Խօսելով այցելութեանց մասին, ստորեւ պիտի տեղեկացնեմ նոր անդամներու մասին, որոնց եւս ոմանց այցելութիւններու տարածք են:

Հոս կը տեղեկագրեմ մէկ երկու գործեր, որոնց մասին անցնող տարիներուն յիշատակութիւն չեմ կատարած: Ունեցանք Մայր Տոմար մը բոլոր խորհրդակատարութեանց համար, ուր արձանագրուած են տարիներէ ի վեր թուղթերու վրայ պահուած մկրտութեանց, պսակներու եւ Թաղմանց բոլոր տեղեկութիւնները:

Նոյնպէս երբ հովուական պաշտօնը ստանձնեցի, Ծուխի անդամներուն կամ մեր եկեղեցւոյ կապուած ընտանիքներուն ցանկը պարունակող ունէ տետրակ գոյութիւն չունէր: Այդպիսի տետրակներ պատրաստեցինք թիւով երկու հատ, Միմիոկան, իսկ երրորդը մեր Տիկնանց միութեան հովանաւորութեամբ Պրն. Տիգրան Ժամկոչեանի հրատարակած գրքոյկն է: Պատրաստած ենք նաեւ Ծուխի ընտանիքներու յատուկ արձանագրութիւնները, որոնց հետեւողութեամբ Ամուսնական տարեդարձներու եւ Ծննդեան տարեդարձի շնորհաւորութիւններ ղրկուած են գրասենեակէն: Հրատարակած ենք եւ ղրկած հիւանդութեան եւ մահուան առիթով սխառտաճ գրութիւններ ցաւակցական եւ առողջութեան մաղթանքի:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ - Բազի ԾՆՈՐՀԱԼԻ Միական Թերթիկի հրատարակութեան է. զանազան առիթներով ղրկուած յայտարարութիւններէն. այսու կուտամ ցանկը նաեւ այն հրատարակութեանց, որոնք եկեղեցական հանդիսութեանց կամ տօնական առիթներով կատարած ենք: 1 - Էջմիածնի եւ Հայրապետական Մաղթանք: 2 - Արեւազալի ժամ:

3 - ԾԱՂԿԱԶԱՐԴԻ Դռնբացէք Արարողութիւն: 4 - Աստուածածնայ Տօնի եւ Խաղող օրհնէքի արարողութիւն: 5 - Խաչվերացի Անդաստանի եւ Տօնակատարութիւն: Այս բոլոր հրատարակութիւնները կատարուած են երկու լեզուներով:

Առաջնորդարանէն տրամադրուած մշակութային հրատարակութիւններ, զանազան յիշատակի առարկաներ մեր ժողովուրդին մտաչելի ընելու համար Տիկիններ Հ. Արապեան եւ Մ. Սաթեան նուիրեցին ցուցաբեղկեր, որոնք Պրն. Կարօ Աւետիքեան փոխադրեց եկեղեցի: Առաջնորդ Արքայանը անձնապէս թելադրեց Առաջնորդարանէն բերել տալ այդ առարկաները եւ վաճառել մեր ժողովուրդէն գնել փափաքողներուն:

Կը փափաքիմ տեղեկացնել ժխական ժողովին որ Տիար Ալէք Մանուկեանի հետ մեր ունեցած Ռդակցութեան իբրեւ արդիւնք, ստացանք իր վերջին նամակը, որով հետաքրքրութիւն ցոյց կուտար ապագային գործածելու համար մեր գնելիք հողին մասին:

Որպէսզի անշուք չանցնի հայկական մեր Մենդեան տօնը, ուրախ եմ որ մեր առաջարկին վրայ անցեալ տարի Տիկին Հայկանոյ 2-րդ թիւը եւ այս տարի Տիկ. Ե. Նազարեան հոգացին ծախքը այդ ճաշկերոյթին որ պատրաստուեցաւ Տիկնանց Միութեան կողմէ: Չորս տարիներէ ի վեր քարերարներ գտնելով գեղեցիկ ավանդուելուն մը դարձաւ մեր Մենդեան ճաշկերոյթը:

Միակն խորհուրդի որոշումով եկեղեցւոյ բոլոր գոյքերուն ամբողջական ցանկը պատրաստուեցաւ Հովիւը Միակն խորհուրդին յանձնեց Ս. Խորանի, Գրասենեակի եւ ավանդատան բոլոր շարժական գոյքերու ցուցակը 1973-ի Հոկտեմբերին:

ՄԻՋ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

Ստորեւ կուտամ ցանկը այդ ուղղութեամբ կատարուած գործերուն:

- 1 - Մասնակցութիւն բերած եմ մեր շրջանի 9 եկեղեցիներու միութեան ժողովներուն, թիւով 10 որոնցմէ Հոկտ. 14-ի ժողովը ճաշկերոյթով մը տեղի ունեցաւ մեր եկեղեցւոյ մէջ. ճաշը պատրաստեցին Տիկիններ Փ. Հանէնեան եւ Ս. Սաթեան:
- 2 - Մայիս 7 եւ Հոկտ. 17 ՕրՌոտոքս-էքիսքըբըլ Ֆէլօշիք եկեղեցական ժողովներուն եւ պաշտամունքին ու դասախօսութեան Ռուսական եկեղեցւոյ մէջ:
- 3 - Ապրիլ 5, Հայէթցվիլ դասախօսութիւն խումբ մը ամերիկացիներու Պրն. Հէրրի Պալըգճեանի առաջարկով ու կարգադրութեամբ: 4 - Մայիս 24 կէսօրին Ղուլթըր Ռիտ Հիւանդանոցի մէջ ՍԻՄԱՌՉԻՈՒՄԻ մասնակցութիւն:
- 5 - Նոյն Օր երեկոյեան Յորդանանեան Դեսպանի մեկնումին առիթով ընդունելութեան: 6 - Սէշընըլ Գըթիտըրըլ մասնաւոր եպիսկոպոսական արարողութեան:
- 7 - Երեսուցական եկեղեցւոյ Պատրիարք Թէոֆիլոսի այցելութիւն. Եթովպիոյ Դեսպանատան մէջ տեղի ունեցած ընդունելութեան: 8 - Դարձեալ Թէոֆիլոս Պատրիարքի այցին առիթով 2. Ուաշինկթըն համալսարանի մատուռին մէջ արարողութեան եւ անոր հետեւող ընդունելութեան - Մայիս 25 եւ 26:
- 9 - Աւագ Ուրբաթ կէսօրին քարոզեցի Չէվի Չէյս Մեթրոական եկեղեցւոյ մէջ:
- 10 - Հոկտ. 21, 1973-կիրակի Օր կէսօրէ ետք ընկերակցութեամբ պարոնայք Լեւոն Կարապետեանի եւ Տիգրան Ժամկոչեանի ֆիլատելիոյ եկեղեցւոյ մէջ 4 եկեղեցիներու Միական Խորհուրդներու Շրջանային ժողովին մասնակցեցանք:

ՆՈՐ ԱՆԴԱՍՆԵՐ - Անցնող 1973 տարւոյ ընթացքին արձանագրեցինք եւ պարբերաբար Միական Խորհուրդին տեղեկացուցինք շուրջ 46 նոր անդամներ որոնց ցանկերը Շնորհալի-ի Սեպտ. 1973 եւ Յունուար 1974 թիւերուն մէջ հրատարակուած են:

Հոգեւոր Հովիւը կուզէ այս տեղեկագիրը փակել է առաջ իր գոհունակութիւնը եւ շնորհակալութիւնը յայտնել բոլոր ազնիւ իր գործակիցներուն, որոնք անկեղծօրէն աշխատեցան Աստուծոյ գործին եւ եկեղեցւոյ պայծառութեան համար:

Բարեաց Տէրը թող իր խնամքը առատաձեռնէ, եւ իր Օրհնութիւնները շնորհէ Ուաշինկթընի հայ հաւատացեալներուն, եւ մեզ ամէնքս գործիքները ընէ իր անուն Սիրոյն եւ խաղաղութեան:

Յունուար 27, Կիրակի
1974

Բարգէն Եպիսկոպոս

Բարգէն Եպիսկ. Վար. Կարապետեան